

Տ. ՏԱԹԵԻ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱԿՈՐԱՅԱՆ

**«ՄԱՇՏՈՅԻ»՝ ՈՍԿԱՆ ԵՐԵՒԱՆՅՈՒ ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
(ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ՆԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ 350 ԱՄՅԱԿԻՆ)**

Ոսկանյան հրապարակությունների շարքում իր կարևորությամբ առանձնակի պեղ է գրավում և «Մաշտոց» ծիսարանի 1667թ. հրապարակությունը¹: Գրքավեսարի տեսանկյունից այն չունի ամստերդամյան նախորդ հրապարակությունների՝ «Յիսուս Որդիի», «Շարակնոցի» և վերջապես «Աստվածաշնչի» հարուստ փորագրանկարները և տառագարողները ու կարող է անգամ նախանջ դիտվել տպագրական առումով, սակայն այս հանգամանքը պայմանավորված է հայ ձեռագրային ավանդույթով: Ընդունված կարգով պարկերագարող և շքեղ ձևավորված էին լինում Շարակնոցները, ուր նշանակալից տոների կանոններին կից բերվում էին տվյալ թեմաներով մանրանկարներ, իսկ «Աստվածաշունչը» նկարագրված էր լինում Նին և Նոր կրակարանների թեմաներով, Տերունական պարկերներով և տեքստային մանրանկարներով ու լուսանցագրողներով: Մաշտոցները սակայն, իրենց գերակշիռ մեծամասնությամբ նման ձևավորում չունեն, այլ՝ միայն կանոնների գլխաբաժանումներ և մեկ երկու մանրանկար, որոնք դրվում են Մկրտության, Պաակի և Ձեռնադրության կանոններին կից: Այսպիսով, եթե «Մաշտոցի»՝ Ոսկանի հրապարակությունը համեմատենք ձեռագիր Մաշտոցների հետ, ապա կտեսնենք, որ այս հրապարակությունը ոչ թե անշուք է, այլ «Մաշտոց»՝ ժողովածուի ձեռագրային ավանդների շարունակությունն է հայ գրքավեսարում՝ մկրտության տեսարանին կից Նորդանանում մկրտության պարկերով, կանոնների ճակարագրողային բաժանումը հիշեցնող գլխաբաժանմամբ և լուսանցագրողներով:

Ոսկանը հարագատրերն է ներկայացրել հայ ձեռագրային ավանդույթին բնորոշ ևս մեկ առանձնահատկություն, այն է՝ կանոններից առաջինը ներկայացնել շքեղ ձևավորված կիսախորանի, իսկ մյուսները՝ նախազարդ ճակարագրողների ներքո:

Այս հրապարակությունում կիսախորանի ներքո բերված է առաջին՝ Մկրտության կանոնը, իսկ նրան կից՝ Նորդանանում մկրտության փորագրանկարը, որը, ինչպես ամստերդամյան մյուս հրապարակություններում, պարկանում է Քրիստոֆեր վան Ջիխեմի փորագրանկարների շարքին:

Ինչպես որ «Շարակնոցում» էր Ոսկանը յուրաքանչյուր փորագրանկարի ներքո բերում այդ պարկերի հոգևոր խորհուրդը վեր հանող չափածո մի քանի տող, այնպես էլ այստեղ է Մկրտության խորհրդին համահունչ ձևով գրում.

¹ Գիրք Սրբոյն Մաշտոցայ վարդապետի, Ամստերդամ, 1667, 315 էջ: Այս գրքի մանրամասն նկարագրությունը տես՝ Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Մավալյան, Նայ գիրքը 1512-1800 թվականներին, Երևան, 1988, էջ 52:

Որ ի կուսէն ըստ Եսայիայ մարմնով ծնար,
 Եւ ի մոգուց պարարագօք մեծարեցար,
 Ի Յոհաննու ի Յորդանան մկրտեցար
 Եւ ձայնիս Տօր Տէր եւ Աստուած վկայեցար:

Կույսից ըստ Եսայիի կանխասացության մարմնով ծնվեցիր ասելով նկարի ունի մարգարեի «Ահա կոյսն յղացի» (Է 14) փողը, իսկ Նայրական ձայնի մասին խոսքերը վերցված են Մկրտության մասին ավերարանական հարվածից. «Եւ ահա ձայն յերկնից որ ասէր. Դա է Որդի Իմ սիրելի, ընդ որ հաճեցայ» (Մարթ. Գ 17):

Ոսկանի այս հրապարակությունը լինելով Մաշտոցի երկրորդ փապագությունը հայ գրքի պարմության մեջ, ըստ էության սակայն, առաջինն է, քանի որ նախորդը, որը լույս է տեսել Աբգար դպիր Թոխաթեցու կողմից, թե՛ իր հնության եւ թե՛ ըստ երևույթին սահմանափակ պապականի պարճառով գործնականում հայրենի չի եղել: Պարանախան չէ, որ այս հրապարակությունից թերի մեկ օրինակ պահպանվել է Երևանի Մարենադարանում եւ այն է՝ ձեռագրով լրացված, որի համար գրվում է ձեռագրերի բաժնում, իսկ Նայասպանից դուրս էլ մեկական օրինակներ պահպանվել են Ս. Ղազարի հավաքածուում եւ Նոմի Վարիկանի գրադարանում:

Ինչպես ցույց են տալիս Ոսկանի հրապարակությանը նախորդող շրջանի ձեռագիր Մաշտոցները, այս ժողովածուն անվանվել է «Գիրքս, որ է Մաշտոց» (Ս. Ղազարի Թ Մաշտոց՝ ԺԳ կամ ԺԴ դ.)², «Տառս որ է Մաշտոց»³ (Երևանի Մարենադարան, ձեռ. հմ. 1025, 1636 թ.) եւ համանման ձևերով: Միաժամանակ, հայ մարենագրական ընդհանրացած ավանդույթով ասվում է, որ այս ժողովածուի առաջին ամբողջացնողը եղել է Մեսրոպ Մաշտոցը: Այս ըմբռնումը եւս արտացոլվել է «Մաշտոց» ծխարանին փոխված բնորոշումներում: Այսպես, 1547 թ. գրված եւ այժմ Երևանի Մարենադարանում պահվող հմ. 1034 ձեռագրի հիշարակարանում այդ ձեռագրի համար ասվում է. «Եւ կոչի անուն սորա Մաշոց, վասն այսորիկ արար սուրբն երանաշնորհ եւ երանելին Մաշոց վարդապետն»⁴:

Այս ըմբռնումը իր հրապարակած «Մաշտոցի» վերնագրում Ոսկան վարդապետը միանգամից արտահայտել է այսպես. «Գիրք Սրբոյն Մաշտոցա վարդապետի»: Ոսկանի դրած այս վերնագրով են լույս տեսել ոչ միայն Ոսկանյան փապարանի հետ հարաբերվող Մաշտոցի 1676 թ. Մարտելի եւ Զմյուռնիայի հրապարակությունները⁵, այլեւ Աստվածատուր Կ. Պոլսեցու Կ. Պոլսի 1704⁶ եւ 1714 թթ. հրապարակությունները⁷, որով «Մաշտոց» ծխարանի հայ ձեռագրային ավանդները Ոսկանը փոխադրում է փապի Մաշտոցները եւ այս ավանդները շարունակվում են նաեւ իրենից հետո:

2 «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մարենադարանին Մխիթարեանց ի Վենեթիկ», հր. Գ. Մաշտոց-գիրք ձեռնադրութեանց, աշխարհ. Ն. Բ. Սարգիսյանի եւ Ն. Գ. Սարգիսյանի, Ս. Ղազար, էջ 1966:

3 «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց», հր. Դ., աշխարհ. Ա. Քյոշկերյանի, Կ. Սուրխայանի, Ն. Քյոշկերյանի, Եր., 2008, էջ 98:

4 Անդ, էջ 137:

5 «Նայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 76, 78:

6 Տե՛ս անդ, էջ 150:

7 Տե՛ս անդ, էջ 206:

Ավանդը վերաբերում է եւ այս հրապարակության մեջ Կրեդ գրած կանոններին: Վերջիններին բնութայնը վկայում է, որ Ոսկանը իր առջին նպատակ է դրել հրապարակելու եկեղեցական ամենօրյա արարողությունների համար անհրաժեշտ «Մաշտոց», եւ այսպէս զերեղված են բացառապէս քահանայի կողմից կիրառվող եկեղեցական-ժողովրդական ամենագործածական կանոնները: Ինչպէս երևում է վերը բերված ձեռագրերից, այսպէս, քահանայականից դուրս գտնել մեկ եպիսկոպոսական կանոն չկա:

Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու հիշյալ երկու հրապարակություններում թելու որոշ չափով ընդլայնվել է կանոնների շրջանակը, սակայն Ոսկանի հրապարակությունից մութ չորս տասնամյակ անց տպագրված երկու Մաշտոցներում էլ կանոնների երկու երրորդը թելու որոշ երկուստաշտայամբ, սակայն կրկնում է 1667 թ. ամստերդամյան հրապարակության կանոնները:

Ոսկանի հրապարակած «Մաշտոցի» ո՛չ կանոնում եւ ո՛չ էլ հիշատակարանում որեւէ մասնաւորում կամ Կրեդություն չկա, թե նա ինչ ձեռագրից կամ ձեռագիր աղբյուրներից է օգտվել: Այս հարցի մտաւոր պատասխանը կարելի է գտնել Ոսկանի հրապարակած «Մաշտոցի» եւ նախորդ շրջանի ձեռագրի Մաշտոցների բաղդատությամբ միայն: Ինչպէս գրում է Ն. Ս. Ճեմճեմյանը. «Մաշտոցները կարելի է երկու մեծ խումբերու բաժնել. առաջին՝ որ ամենապարզ եւ համառօտ ձեւն է, եւ որ՝ սկսեալ Թ-Ժ դարերէն մինչեւ ԺԷ-ԺԸ դար պահուած է գանազան ձեռագիրներու մէջ: Ասոնց հետ միասին սկիզբ առած է երկրորդ ընդանիք մը, աւելի ընդարձակ, ճշիւ աղօթքներով եւ շարականներով, եւ առ ալ իր կարգին սկսեալ ԺԱ-ԺԲ դարերէն մնացած է ձեռագիրներու մէջ՝ աւելի քան առաջին խումբը:

Ոսկան վրդ. իր տպագիր օրինակը պատրաստած արեւն՝ շատ հաւանաբար տեսած է այս գանազանությունը, եւ իր բնագիրը պատրաստելու համար օգտագործած է միայն առաջին խումբի ձեռագիրներէն, որ ամէն բան պարզ ու համառօտ է, որ չկան ամենեւին շարականներ ու աղօթքի գանազանություններ»⁸:

Նայր Սահակը նույն կերպ է բացատրում եւ այն հանգամանքը, որ Ոսկանը «Մաշտոցի» այս հրապարակության օրինակների մի մասի վերջում զերեղելով Նանգստյան շարականները, ինչպէս նաեւ մի շարք ծիսական գանձեր, տաղեր, դրանք սկսել է դարձյալ նոր էջահամարով⁹:

Այժմ անցնենք այս Մաշտոցի կանոնների բնութայնը: Քահանայական Մաշտոցի գլխավոր չորս կանոններն են մարդկային ողջ կյանքի ընթացքի հետ հարաբերվող Մկրտության, Պսակի, Նաղորդության եւ Թաղման կարգի կանոնները եւ այս չորս կանոնները նույն այս հաջորդականությամբ ինչպէս հանդիպում են քահանայական ձեռագիր Մաշտոցներում, Կրեդ են գտնել եւ Ոսկանի այս հրապարակությունում:

Մկրտության կանոնից առաջ, սակայն, Ոսկանը զերեղել է Ջրօրհնյաց կանոնը: Ինչպէս հայտնի է, այս կանոնը Նայոց եկեղեցում կատարվում է հունվարի վեցին՝ Ս. Ծննդյան եւ Աստվածահայրության տոնին, եւ որպէս այդ տոնի մի մաս ներկայացված է «Ճաշոցում» եւ վերջինիս հունվարի վեցի կանոնի մաս է կազմում: Նույնը վերաբերում է Ավագ Նիգշաբքիի ապաշխարողների արձակման եւ Ուրնվայի կանոններին, որոնք մաս

8 Ն. Ս. Ճեմճեմյան, Ոսկանի Մաշտոցը. «Բազմավեպ», 1966, էջ 287:

9 Տե՛ս անդ, էջ 287-288

են կազմում Ավագ Շաբաթվա եւ ի մասնավորի՝ Ավագ Նինգշաբթիի արարողություններին, ինչպես նաև Խաղողօրհներժի կանոնին, որի արարողությունը կատարվում է Տիրամոր վերափոխման փոխին եւ այս կանոնը նույնպես ներկայացված է «Ճաշոցում»:

Ոսկանի փապագրական գործունեության շրջանում դեռևս «Ճաշոց» լույս չէր տեսել եւ այս կանոնները բնականաբար չէին կարող կատարվել նրանցով: Նաև, քանի որ ձեռագիր «Ճաշոցները», պայմանավորված իրենց առավել մեծ ծավալներով եւ մեծադիր չափերով, անհամեմատ քիչ էին, քան մեծ փարածում ունեցող քահանայական Մաշտոցները, ուստի, այս արարողությունների կատարման համար դժվար էր գտնել նաև ձեռագիր Ճաշոցներ: Նախկանի Ճաշոցը փապագրվեց Ոսկանի մահից ավելի քան մեկ տասնամյակ անց՝ 1686 թ. հենց Ոսկանի երբեմնի գործակիցների եւ նրա միջավայրի փապագրիչների կողմից, ի մասնավորի՝ Գասպար Սահրադյանի ու Թադեոս Նամագասպյանի¹⁰:

Ճաշոցից հանված Ջրօրհնյաց կանոնը եւ վերջինիս սկիզբը Ոսկանը խորագրել է այսպես. «Դանուն ջուր օրհներոյ. գգնումն քահանայքն եւ երթան միաբան եւ ասեն սաղմոս 28. Ձայն Տեառն ի վերայ ջուրց» (Էջ 1): Այս կանոնը համեմատելով Ճաշոցի Վաղարշապատի հրատարակության համապատասխան հատվածի հետ, տեսնում ենք, որ երկուսում էլ, թեև որոշակի երեւառաջությամբ, սակայն համընկնում են բերված միավորները, թեև Ոսկանի մոտ առավել համառոտ:

Անհրաժեշտ է նշել, որ թե՛ այս կանոնի եւ թե՛ հաջորդող մյուս կանոններում Սուրբգրային ընթերցվածների համեմատությունը վեր է հանում որոշակի փոփոխություններ «Աստվածաշնչի» Ոսկանի հրատարակության բնագրի հետ: «Մաշտոցը» Ոսկանը հրատարակել է «Աստվածաշնչից» մեկ փաթի անց, այնպես որ Մաշտոցի սուրբգրային ընթերցվածները նա կարող էր համապատասխանեցնել իր հրատարակված Աստվածաշնչի համապատասխան հատվածների բնագրին, սակայն այդպես չի վարվել, կարծում ենք՝ ելնելով երկու նկարագրումից: Առաջին՝ նախ հավատարիմ մնալ հայ ձեռագրային ավանդույթին եւ այն չվերախմբագրել ըստ իր կազմած հրատարակության, ինչպես որ հինգերորդ դարի հայոց պարմագիրների գործերում Սուրբ Գրքից բերված մեջբերումները չեն վերախմբագրվել եւ հարմարեցվել Սուրբ Գրքի բնագրին, այս պատմիչների երկերի հետագա ընդօրինակողների կողմից:

Երկրորդ պարճառը կարծում ենք, ծիսաարարողական է: Քանի որ «Մաշտոցի» կանոնները եկեղեցական ծեսի կարևոր մասն են, ուստի, ըստ երևույթին, Ոսկան վարդապետը չի ցանկացել, որ սուրբգրային ընթերցվածների փոփոխությամբ փոխի արարողությունների ժամանակ ընթերցվող հատվածների լեզուն եւ դրանով իսկ առավել չմեծացնի իր հրատարակված եւ ձեռագիր Մաշտոցների բնագրերի միջև եղած լեզվական փոփոխությունները:

Ձեռագիր Մաշտոցների ու դեռևս Աբգար դպիրի փապագրած առաջին Մաշտոցով ձեռավորված ավանդույթով նախ գալիս է Մկրտության կանոնը, որն ըստ էության, առաջին կանոնն է, քանի որ Ջրօրհնյաց կանոնը վերցված է Ճաշոցից եւ այնքան էլ փարածված չէ Մաշտոց ժողովածուներում: Ամստերդամյան հրատարակությունում Մկրտության

10 Տե՛ս «Նայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 97:

կանոնն ունի հետևյալ խորագիրը. «Կանոն մկրտության յորժամ զամենայն քրիստոնէից քոյայս կամին մկրտիլ» (էջ 17): Կ. Պոլսի Մաշտոցում այն անվանվում է «Կանոն առաջին՝ սրբազնագոյն մկրտության երախայից»¹¹: Վաղարշապատի «Մաշտոցում» այս կանոնն ունի Ոսկանի հրապարակության նույն խորագիրը. «Կանոն մկրտության, յորժամ զամենայն քրիստոնէից քոյայս կամին մկրտիլ»¹²:

Մկրտության այս կանոնի համեմատությունը հիշյալ կանոնի ձեռագիր և քաղաքի կանոնների հետ, վեր է հանում մի շարք փարբերություններ, թե ծիսական բնույթի և թե ժողովրդական կենդանի արարողությունների հետ կապված:

Այս կանոնի մաս կազմող ժողովրդական բնույթի նման բոլոր արարողությունները դուրս են թողնված Ոսկանի հրապարակությունից, ինչպես օրինակ նաքոս կապելը: Այս հանգամանքը որոշ չափով պայմանավորված է նաև նրանով, որ Ոսկանը հնագույն Մաշտոցների հետևողությամբ որոշակի փարբերակում է մարգրել մանկանց և երախայից մկրտությունների միջև, առավել շեշտադրելով երախայից մկրտությունը, որ երևում է անգամ այս կանոնի խորագրից, ինչպես նաև փարբեր ենթավերնագրերից և հենց մկրտության կանոնի սկզբում գրնվող հետևյալ հրահանգից. «Ապա յառուր մկրտութեան առ դրունս եկեղեցոյն կարարեսցես զայս կարգ հանդերձ միաբան ուխտին ի վերայ քոյային և չափ հասակացն» (էջ 18), և բերվում են երեք սաղմոսներ: Մկրտության կանոնը չափահասների համար նման փարբերակվածությամբ ներկայացնելու համար Նայր Սահակը գրում է. «Ոսկան վրդ. կամայական կերպով դրած է այս զանազանությունը, պահանջելով որ մեծահասակ երախային մկրտութեան արեն ըստին երեք սաղմոսներ, մինչ իրականութեան մէջ՝ երեք սաղմոսները մկրտութեան կանոնին էական մաս կը կազմեն, և ոչ մէկ ձեռագիր մեծահասակի կամ փոքրահասակի զանազանություն կը դնէ»¹³:

Անհրաժեշտ է սակայն նշել, որ ծիսական այս հարվածը ոչ թե Ոսկանի նորամուծությունն է, ինչպես նշում է Նայր Սահակը, այլ գրեթե բառացիորեն համապատասխանում է Վենետիկի հնագույն՝ Թ-Ժ դարերով թվագրվող Մաշտոցի (Մաշտոց Ա) Մկրտության կանոնին: Ոսկանի մոտ գրնվող վերը բերված հարվածը գրեթե բառացի համընկնում է կա և Վենետիկի այդ Մաշտոցում. «Եւ ապա յառուրս մկրտութեան առ դունս եկեղեցոյն կարարելոց և քահանայն զայս կարգ հանդերձ միաբան ուխտին ի վերայ քոյայոց և չափ(ա) հասակաց»¹⁴:

Նույն կերպ, նորամուծություն չէ և Ն. Սահակի հիշարկված երեք սաղմոսների կարարումը: Այս հարվածը ևս լիովին համընկնում է Ոսկանի և Վենետիկի հնագույն Մաշտոցներում:

11 «Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ», Կ. Պոլիս, 1807, էջ 5:

12 «Մաշտոց, յորում առնողին սրբազան արարողութիւնը ազգիս ըստ Սահմանադրութեան Սուրբ Եկեղեցոյս Նայոց», Վաղարշապատ, 1894, էջ 5:

13 Անդ, էջ 288:

14 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հր. Գ. Մաշտոց-Գիրք Ձեռնադրութեանց, էջ 19:

Վենետիկի Մաշտոց

Ասի Սղ. ի թիւ Գ: ԻԴ. առ քեզ Տէր
համբարձի. ԻԵ. Դար արա ինձ Տէր. Ծ.
Ողորմեա ինձ Աստուած:

Ռսկանի Մաշտոց

Էջ 18. Ասի սաղմոս ի թիւ 24՝
Առ Քեզ Տէր համբարձի. 25՝
Դար արա ինձ Տէր. 50՝ Ողորմեա ինձ
Աստուած:

Այս հանգամանքն իր կնիքն է թողել ձեռնի ողջ ընթացքի վրա: Մկրտության ընդունված կարգում եթե ասվում է «Ապա առնու կնքահայրն գերեխայն ի գիրկն, դառնայ յարեւմուտս եւ ասէ ընդ քահանային երիցս՝ Նրաժարիմք»¹, ապա Ռսկանի մոտ ասվում է. «Ապայ հրամայէ երախային դառնալ յարեւմուտս, երդմնեցուցանել երիցս անգամ, ասելով Նրաժարիմք» (Էջ 20): Նույնն է եւ Վենետիկի Մաշտոցում. «Եւ ապա հրամայէ երախա[յ]ին դառնալ յարեւմուտս եւ երդմնեցուցանել երիցս անգամ»:

«Նրաժարիմքի» ընդունված բնագիրը եւս ներկայացվում է բայի դիմային փոփոխությամբ.

Վաղարշապատ, 1894

Էջ 24. Նրաժարիմք ի սարանայէ
եւ յամենայն խաբէութենէ նորա. ի
պարբանաց նորա, ի խորհրդոց նորա:

Ամստերդամ, 1667

Էջ 20. Նրաժարիմք ի Քէն սարանայ
եւ յամենայն խաբէութեան բումմէ: Եւ ի
պարբանաց քոց եւ ի պաշտօնէից քոց:

Վաղարշապատի Մաշտոցի նման է եւ Կ. Պոլսի հրապարակությունը²: *Նրաժարիմք*-ի՝ Ռսկանի վկայակոչած ձեռը եւս, սակայն, համապարասխանում է Վենետիկի հնագույն Մաշտոցին. «Նրաժարիմք ի քէն սարանայ եւ յամենայն խաբէութենէ բումմէ»:

Ռսկանը թեւեւ շեշտադրում է երախայի մկրտությունը, սակայն ջրի մեջ ընկղմամբ մկրտությունը արդեն հստակորեն ներկայացնում է որպես մանկան կարարվող մկրտություն, գրելով. «Ապա իջուցանէ գմանուկն յառազանն եւ արկանէ զջուրն ընդ գլխովն» (Էջ 25):

Չնայած այս հանգամանքին, Ռսկանի մոտ այնուամենայնիվ կնքահայրը, ում տրվում է ավագանից հանվող մանուկը, չի հիշարակվում:

Թեւեւ իմաստային որոշակի նրբերանգներով փաբեր, սակայն համընկնում է դրոշմի խորհուրդը ինը դրոշմումներով:

Մաշտոցներում (այդ թվում եւ Վաղարշապատի) սովորաբար նախ աչքն է հիշվում դրոշմի ժամանակ եւ հետո նոր ականջը, Ռսկանի մոտ հակառակն է:

Ձեռքերի դրոշման համար Մաշտոցներում ասվում է. «զՁեռսն (ափ ի կից ունելով)»:
Ռսկանի մոտ սղմամբ ասվում է՝ «զափակիցն ունելով» (Էջ 27): Այն առավել համառոր է Աբգար դպիրի հրապարակած Մաշտոցում՝ «Զափկիցսն»³:

Դրոշմի խորհրդին հաջորդող ընթացքը թե՛ ձեռի կարարման եւ թե՛ նրան մաս կազմող

1 «Մաշտոց, Վաղարշապատ», 1894, էջ 24:

2 «Մաշտոց», Կ. Պոլիս, 1807, էջ 9:

3 Երեւանի Մալեանադարան, ձեռ. հմ. 8264, թերթ 19բ:

միավորների առումով բավականին հակիրճ է, ուր քահանայի խոսքերին ի պատասխան դարձյալ մկրտվողն է պատասխանում և ոչ թե կնքահայրը:

Նույն պրամաբանությամբ է պայմանավորված և Մկրտության խորհրդի հաջորդող ընթացքը Ոսկանի հրապարակությունում: Դրոշմելուց հետո ընդունված կարգով այնուհետև երեխային փրվում է առաջին հաղորդությունը, ապա և նկարագրվում է փուն փանելը և մկրտության ութօրեքը մկրտության թագվերացով, որը Վաղարշապատի Մաշտոցում բերվում է «Եարգ հաղորդելոյ», «Նորոգ մկրտելալ», «Նորոգ մկրտելոց» խորագրերի ներքո, այնինչ Ոսկանի մոտ ավագանից հանելուց հետո մկրտյալին հագցնում են և՛ «հաղորդեցուցանե ի սուրբ խորհրդոյն, յուղարկէ մինչև ի դուռն եկեղեցոյն»:

Մկրտվածին եկեղեցուց հանելով սկսվում է ժողովրդական արարողությամբ ողելցվող ընթացքը. «Յևր մկրտութեան՝ քահանայքն առեալ փանեն ի Սուրբ Եկեղեցոյն զմանուկն ի փուն շուրջառաւ, աւերարանաւ և լուացեալ մոմեղինօք», ասվում է Վաղարշապատի Մաշտոցում (Էջ 79): Մաշտոցները նաև գեղեցիկ ձևով են ներկայացնում ութօրյա այս ընթացքը, թե ինչպես են երգում փուն մրնելով, ապա մանկանը մորն են փալիս և ութերորդ օրը նորոգ մկրտյալի նարտը քանդում են և քահանայի գլխավորությամբ լողացնում մանկանը:

Ոսկանի Մաշտոցում այնինչ, ութօրյա այս ընթացքի համար ասվում է. «Եւ ողջունեալ ի ժողովրդոցն արձակին ի փունս իւրեանց: Եւ եօթն օր յեկեղեցոջն կացցէ և ամենայն ուրեք սպիարակագգեսար լիցի և զգլոխն ծածկեալ պահեսցէ սպիարակ փակեղամբ: Զգոյշ կալով աղօթից եկեղեցոյն, պարապելով հաղորդելոյ մարմնոյ և արեան Քրիստոսի: Իսկ յաւուր ութերորդի՝ վերացուցանէ քահանայն զթագն», և ասվում է «Որք մկրտեցան և լուսաւորեցան» աղոթքը:

Այս հարվածը եւս, գրեթե բառացի համընկնում է Վենետիկի հնագույն Մաշտոցի հետ, ուր ասվում է. «Եւ ողջունեալք ի ժողովրդոցն յուղարկին ի փունս իւրեանց: Եւ ութ ար յեկեղեցոջն կացցէ, սպիարակագգեսար լիցի և գլոխն ծածկեաց՝ սպիարակ փակեղամբ, զգոյշ կացցէ՝ աղաթից եկեղեցոյն պարապելով յամենայն ժամ, հաղորդելով մարմնոյ և արեանն Քրիստոսի: Եւ յևր ութ աւուր վերացուցանէ քահանայն զպսակն»⁴:

Այսպիսով, երախայի մկրտության արարողության ժողովրդական փոխախմբության ողջ ընթացքը այսպեղ փոխարինված է չափահաս երախայի ութօրյա գիտակցական առանձնացմամբ և խոկմամբ:

Անհրաժեշտ է նշել, որ Աբգար դպիրի հրապարակած «Մաշտոցում» եւս չափահաս երախան է մկրտվողը, որ ութօրյան անցկացնում է եկեղեցում առանձնությամբ: Նաև նրա հանդերձները և պահվածքը ուղղակիորեն հիշեցնում են Ոսկանի «Մաշտոցի» համապատասխան հարվածը. «Եւ ողջունեալք ի ժողովրդենէն արձակին ի փունս իւրեանց և ութ ար եկեղեցոջն կացցէ:

Եւ սպիարակայգգեցեալ լինիցի:

Եւ զգլոխ ծածկեալ ունիցի սպիարակ փակեղամբ:

Եւ զգոյշ լինիցի եկեղեցոջն:

Եւ հաղորդեցի մարմնոյ և արեան Տեառն հանապազ:

4 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց ի Վենետիկ», հր. Գ, էջ 22:

Եւ յկառ յոր առաւել լերացոյցանէ քահանայն զթագն եւ ասէ զաղաթս այս. Որք մկրտեցան եւ յուսաւորեցան»⁵:

Ինչպէս Կրիստոսն եւնք, այս հարկաւոր քահանայն համընկնում է Վենետիկի հնագոյն Մաշտոցուն, Արգարի եւ Ոսկանի մօտ: Նամընկնումը այնքան մեծ է, որ կարելի է անգամ ենթադրել, թէ Ոսկանը օգտւել է Արգարի հրապարակությունից, եթե նույն այս նմանությունը չգրնենք նաեւ Վենետիկի Մաշտոցուն, որը միջանկյալ դիրք է գրավում Ոսկանի եւ մնացյալ Մաշտոցների միջեւ: Ի փարբերություն Ոսկանի Մաշտոցի, որպէս Մկրտության կանոնը հիմնականում վերաբերում է չափահաս երախային, Վենետիկի Մաշտոցուն Մկրտությունը զուգահեռ ներկայացվում է թե՛ երախայի եւ թե՛ մանկան համար, որն արտահայտվում է վերնագրից սկսած. «Կանոն մկրտութեան յորժամ զչափահաս զոք քրիստոնեայ առնեն կամ յորժամ զքրիստոնէից փոխաւ մկրտեն»⁶:

Վերնագրից սկսվող այս զուգահեռականությունը Վենետիկի Մաշտոցուն արտահայտվել է եւ ծեսի մեջ, ուր իրար զուգահեռ հիշվում են երախան եւ մանկան փոխարեն հանդես եկող կնքահայրը. «Եւ ապա հրամայէ քահանան երախային կամ կնքահորն դառնալ յարեւմուտս»: Նամանման ձեռով քահանան այնուհետեւ երախային կամ կնքահորն է հարցնում. «Եւ ապա հարցանէ ցերախայն կամ ցկնքահայրն»:

Նույնը վերաբերում է եւ մկրտությանը հաջորդող ութօրեքին, որ Վենետիկի Մաշտոցուն ներկայացված է որպէս յոթօրեք, եւ ասվում է. «Իսկ մկրտեալն եթէ երախայ է, առեալ փրանին ի դուռն, իսկ եթէ չափահաս իցէ, զեօթն օր յեկեղեցոջ կացցէ եւ սպիտակագգետս լիցի եւ զգլխն ծածկեալ ունիցի սպիտակ փակեղամբ կամ կտաւով ինչ:

Զգոյշ կացցէ եկեղեցոյ եւ աղօթից պարապեացի յամենայն ժամ եւ ի պարարագի հաղորդեացի մարմնոյ եւ արեանն Քրիստոսի»⁷:

Ոսկանի Մաշտոցուն քանի որ շեշտադրումը դրված է երախայի եւ ոչ թե մանկան վրա, ուստի չկա եւ քառասունքից հանելու կանոնը:

Այսպիսով, հստակորեն երևում է, որ Վենետիկի Մաշտոցի հրապարակիչները օգտվել են Ս. Ղազարի հնագոյն Մաշտոցից եւ հնագոյն այս խմբագրությանը պարզապես նման մեկ օրինակից է օգտվել եւ Ոսկան Երևանցին:

Մաշտոցներում ընդունված կարգով հաջորդը ներկայացվում է Պսակի կանոնը: Նայ ձեռագրային ավանդույթով կանոնների անվանումները ոչ միայն նշվում էին փոխալ կանոնի խորագրում, այլեւ ստորին կամ վերին լուսանցքներում, եւ սովորաբար այդ կանոնը մի դեպքում ներկայացվում էր մի անվանմամբ, իսկ մյուս դեպքում՝ մեկ այլ: Ոսկանը հավաքարիմ է մնացել եւ այս սկզբունքին, որի համար այս կանոնի խորագիրն է «Կանոն հարսանեաց պսակի», իսկ էջի վերին լուսանցքում այն անվանվում է «Պսակ առնելոյ»:

Ոսկանի «Մաշտոցում» պսակի կանոնը արդեն չունի Ս. Ղազարի հնագոյն Մաշտոցի սեղմությունը եւ ավելի մոտ է ժողովրդական ավանդույթներին, սակայն չունի պսակին նախորդող եւ հարսանեական արարողությունների անբաժանելի մաս կազմող Նալավի եւ Նշանի օրհնությունների կանոնները:

5 Երևանի Մարենկոյան, ձեռ. հմ. 8264, թերթ 22բ:

6 Մաշտոց, Վենետիկ», 1830, էջ 1:

7 Անդ, էջ 36:

Պսակի կանոնը այսպես միանգամից սկսվում է եկեղեցու դռան մոտ՝ հարսի և փեսայի ծուր գալով. **«Նախ քանի ի դուռն եկեղեցոյն եւ զգուշութեամբ խոստովանեցուցանէ քահանայն զհարսն եւ զփեսայն: Եւ ապա նաջօք ոլորէ եւ ընդ ոլորելն ասէ սաղմոս Ի»** (Էջ 31): Վաղարշապատի և մյուս Մաշտոցների Պսակի կանոնի նման այսպես առանձնաբար ներկայացվում է նաև հարսի և փեսայի նախնիների ոլորումը:

Պսակի ընդունված կանոնին համընկնում են նաև քահանայի՝ հարսին և փեսային ուղղված հարցումները քեր և հնազանդ լինելու մասին: Այն սակայն, բերված է ոչ թե ընդունված հարցով, պարասխանով և խրատներով, այլ համառոտ հարցումների նկարագրական ընթացքով:

Պսակի կանոնին, երեք, յոթ կամ ութ օր հետո հաջորդում է Թագվերացը, որը սակայն, Ոսկանի մոտ անգամ որպես առանձին կանոն չի նշվում և առանձին խորագիր չունի, այլ շարունակվում է հարսանյաց պսակի վերջում, վերին լուսանցային «Պսակ առնելոյ» նշման փակ:

Ինչպես հայրնի է, երկրորդ ամուսնության պսակը շար ավելի անշուք է կարարվում: Այն էլ ավելի անշուք է ներկայացված Ոսկանի մոտ. «Կանոն երկրորդ ամուսնության պսակ. սարկառացն քարոզէ Սուրբ եկեղեցոյ մեջքեղն և բաժակալ գինի պարբասարի» (Էջ 42):

Քանի որ երկրորդ պսակը որոշ առումով մերժելի է ընկալվել, ուստի, ըստ երևույթին, որպես մեղանշման յուրօրինակ արարահայտություն, պսակվողները «ասեն երկույրասան Տէր ողորմեայ» (Էջ 42), որից հետո քահանան երկու աղոթք է ասում, ապա գինի խմեցնում նրանց և արարողությունն ավարտվում է «Պահպանիչով»:

Պսակի կանոնաշարին ընդունված կարգով հաջորդում է Նաղորդության կանոնը՝ «Կանոն հաղորդ փայլոյն» (Ամստ., էջ 46), որը ձեռագիր Մաշտոցներում, ինչպես Կ. Պոլսի և Վաղարշապատի հրապարակություններում անվանվում է «Նաղորդ փայլոյն»:

Նաղորդություն փայլոց հետո քահանայական Մաշտոցներում սովորաբար ներկայացվում է Թագման կարգը: Կ. Պոլսի հրապարակությունում այս կանոնը անվանվում է «Կարգ թաղման ննջեցելոց աշխարհականաց, արանց և կանանց» (Էջ 46): Վերջինիս անվանումը ավելի համառոտ է ամսերդասյան հրապարակությունում. «Կանոն համօրէն ննջեցելոցն» (Էջ 51):

Որպեսզի այնպես չընկալվի, որ այս կանոնը վերաբերում է նաև հոգևորականներին, արդեն հիշյալ ձեռագրային ավանդույթով այս կանոնի էջերի վերին լուսանցքում այն անվանվում է «Աշխարհաթաղ առնելոյ»: Նույն ձևով, թաղման հաջորդ օրն առավոտյան գերեզման գնալու կարգը կանոնի խորագրում անվանվում է «Երկրորդ ատուրն յորժամ երթան ի գերեզմանն», իսկ լուսանցքում այն անվանվում է «Այգ առնելոյ»: Կ. Պոլսի Մաշտոցում այս կանոնն ունի «Մեծի այգուց կարարելոյ» (Էջ 62) խորագիրը:

Նույն կառուցվածքով են փրված նաև Տղայաթաղի և փղայի այգուցի կանոնները, որոնք բավականին մանրամասն են և համընկնում են մյուս Մաշտոցների հետ: Ոսկանի Մաշտոցը սակայն, չունի փղայի յոթի կանոնը, ինչպես նաև քառասունքն ու փարին կարարելու մասին հիշարկությունները:

Այս Մաշտոցի աշխարհականներին վերաբերվող կանոնների շարքը ըստ էության

ավարտվում է Տղայաթաղին հաջորդող և Ավագ Տինգշաբթիին կարարվող «Կանոն Մեծի Տինգշաբթուն զապաշխարողսն արձակելոյ» և Ուրնվայի կանոններով, որոնք, ինչպես ասացինք, ավելի շարժառիթներով են «Ճաշոցի» հետ, և Ոսկանը այնպեղից Ավագ Տինգշաբթիի կանոնից վերցնելով դարձրել է «Մաշպոցի» առանձին երկու կանոն: Ծաշոցում Ավագ Տինգշաբթիի արարողությունների թվարկման և ընթացքի նկարագրության մեջ երրորդ ժամի համար ասվում է. «Իսկ ի յերրորդում ժամու ժողովեացին ի դուռն եկեղեցոյն վասն արձակելոյ զապաշխարողսն. թէ իցէ և թէ ոչ՝ զկարգն կարարել պարպ է», որից հետո հրահանգվում է. «Եւ ասա ի վերայ Սաղմոսարանին թիւ գուրդայս վեց»⁸: Ոսկանի մոտ հիշյալ հարվածը հետևյալ ձևով է ներկայացված. «Ժողովէ քահանայն զապաշխարողսն ի դուռն եկեղեցոյն, և ասն գուրդայս վեց» (էջ 103): Քանի որ այս կանոնը Ծաշոցում մի մասն է Ավագ Տինգշաբթիի արարողությունների, ուստի Ոսկանը թեև որոշակի կրճատմամբ, սակայն հարազատորեն ներկայացնելով այդ մասը, որոշակի փոփոխություններ է կարարել սկզբում, որպեսզի այն դառնա ընդունված կարգով սկիզբ ունեցող առանձին մի կանոն: Այս պարճառով Ոսկանը դուրս է թողել երրորդ ժամին հավաքվելու մասին խոսքերը: Ծաշոցում այն վերաբերում էր եկեղեցական ինը ժամերգություններից երրորդ ժամի արարողություններին: Ոսկանը դուրս թողնելով այդ կապակցությունը, ապաշխարողներին վերաբերող այս բաժինը արդեն դարձրել է առանձին կանոն: Ինչպես արդեն ասացինք, 1704թ. իր հրապարակած «Մաշպոցում» այդպես է վարվել և Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին, այն որպես առանձին կանոն բերելով նույն վերնագրով. «Կանոն Մեծի Տինգ շաբթուն զապաշխարողսն արձակելոյ»⁹:

Անհրաժեշտ է նշել, որ Վենետիկի հնագույն ձեռագիր Մաշպոցը եւս ունի Ավագ Տինգշաբթիի ապաշխարողների արձակման և Ուրնվայի կանոնները¹⁰:

«Ծաշոցում» ընթերցվածների շարքը մի քանի անգամ ընդմիջարկվում է ծիսական արարողությունների նկարագրությամբ և հրահանգներով, որոնք Ոսկանի Մաշպոցում բոլորը ի մի են հավաքվել և ներկայացվում են որոշակի համառոտությամբ, որը եւս պայմանավորված է Ավագ Տինգշաբթիի արարողությունների այս շարքը որպես մեկ կանոն ներկայացնելու ցանկությամբ: Այսպես, «Ծաշոցում» ասվում է. «Եւ մտնալ յեկեղեցին սկսանիցին Շարական»¹¹:

Այն Ոսկանի մոտ ներկայացված է այսպես. «Ապա առեալ քահանայն զապաշխարողսն մտնեն յեկեղեցին» (էջ 117): Ոսկանի հիշյալ ծիսական հրահանգ-նկարագրությունը ավարտվում է այսպես. «Եւ դնեն զառարարանն առաջի բեմին և համբուրեն զաջ քահանային և զմիմեանս, և քաջեն զչորեքդրամեանն, որպէս հրամայեաց Մովսէս Ղևարացոյն»: Եկեղեցի մտնելն ու չորեքդրամյանը քաջը Ոսկանի մոտ եթե ներկայացված են մի պարբերությամբ, ապա «Ծաշոցում», համաձայն Մովսիսական օրենքի փոփոխ դրամի մասին խոսվում է մի քանի էջ անց, թեև նկարագրությունը համընկնում է. «Եւ դիցեն զՍուրբ Խաչն և զԱռարարանն առաջի բեմին, և համբուրեսցեն, և քաջեն զչորեքդրամեանն, զոր կարգեաց Մովսէս Ղևարացոյն: Եւ օրհնեսցէ քահանայն զապաշխարողսն, և արձակեսցէ»¹²:

8 «Ծաշոց գիրք Նայսարանեայց եկեղեցոյ», Վաղարշապատ, 1872, էջ 191:

9 «Մաշպոց», Կ. Պոլիս, 1704, էջ 525-556:

10 «Մայր ցուցակ Վենետիկի», հր. Գ, էջ 36-37:

11 «Ծաշոց», Վաղարշապատ, 1872, էջ 196:

12 Անդ, էջ 199:

«Ճաշոցում» արարողությունը այնուհետև շարունակվում է վեցերորդ ժամին, որպես շարունակությունը երրորդ ժամի արարողության: Այս մասին հիշյալ նույն հարվածում ասվում է. «Իսկ ի վեցերորդ ժամուն՝ ժողովեսցին ի յեկեղեցին, ծածկեսցեն զսեղանն և ասասցեն զմնացեալ Ողորմեայսն»¹³: Ոսկանի մոտ սակայն, դրամի ընծայման պարզերից անմիջապես հետո ասվում է արարողությունը եզրափակող օրհնությունը. «Օրհնութիւն, զոր օրհնէ առաջնորդն զժողովուրդն ըստ խորհրդոյն (Էջ 118): Այս օրհնությունն ունի հետևյալ սկզբածքը. «Օրհնեալ է անբաւ մարդասիրութիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ»: Այս օրհնությամբ նաև անցում է կատարվում դեպ Ուրվվայի արարողությունը:

«Ճաշոցում» Ուրվվան ներկայացված է Ավագ Հինգշաբթիի արարողությունների շարքում որպես փաստերորդ ժամին կատարվող արարողություն: Ուրվվան որպես առանձին կանոն Ոսկանի «Մաշտոցում» ունի հետևյալ խորագիրը. «Կանոն Մեծի Հինգշաբթոյն Ուրնալուային» (Էջ 121), իսկ Էջի վերին լուսանցային նշումն է. «Ուրնալուայառնելոյ»¹⁴:

Ոսկանը թեև այս «Մաշտոցում» խուսափում է ծիսական փառեր և զանձեր գերեզմանաց, ինչպես որ վարվել էր ջրօրհնյաց դեպքում, այս կանոնում, հետևելով «Ճաշոցին», բերում է Ուրվվայի «Այս խորհուրդ լցաւ» սկզբածքով զանձը, որի հեղինակն է Մխիթար Այրիվանեցին: Փոխարենը, սակայն, բերված չէ Առաքել Սյունեցու «Աստուածն ամենի, Միածին Որդի» սկզբածքով փառը:

«Ճաշոցում» նախ ներկայացված է ջրի Տյառնագրումը օրհնության խոսքով, և ապա՝ ուրբերի լվացման արարողությունը¹⁵: Ոսկանը այս երկուսը միացրել է իրար: Միաժամանակ, նա թեև նախորդ կանոններում ծիսական ընթացքը որոշակիորեն կրճատում էր, այսպես մի փոքր ավելի մանրամասնում է, ըստ երևույթին ցանկանալով այս արարողությունը ավելի հանդիսավոր ներկայացնել գաղթաշխարհի քաղաքային միջավայրում:

«Ճաշոցում» որևէ հիշատակություն չկա Ուրվվայի ժամանակ ուրբերին խաչանման յուղ դրոշմելու մասին, որը գրում է Ոսկանը: Նույն ձևով որևէ հիշատակություն չկա ևս այն մասին, թե երբ քահանան լվանում է հավաքվածների ուրբերը, հավաքվածները պարզավոր են քահանայի ուրբերը լվանալ, ինչպես Ոսկանն է ասում:

Ոսկանի հրապարակած Մաշտոցում ամենամեծ ծավալն ունի Քահանայաթաղի կանոնը (Էջ 142-242): Վերջինիս խորագիրը ևս բավականին ծավալուն է. «Կանոն յորժամ եպիսկոպոս կամ քահանայ կամ Նայրապետ կամ ուխտի առաջնորդ կարարի մահումամբ»:

Ամսերեդամյան «Մաշտոցում» արվում է ամենամանրամասն ծիսական նկարագրությունը վախճանյալի լվացմամբ, պարանմամբ, գերեզմանի փորմամբ, հողը դնելով, գերեզմանը կնքելով և այդ ընթացքում ասվող սուրբգրային ընթերցվածներով, շարականներով և աղոթքներով: Ավելին, նույն ձևով բերված են նաև քահանայաթաղի հաջորդ յոթ օրերը ևս (Էջ 242-268):

Կ. Պոլսի «Մաշտոցում» քահանայաթաղի կանոնը գերեզման է ամենավերջում¹⁶:

Այս կանոնաշարը Կ. Պոլսի և Ամսերեդամի հրապարակություններում իրար գուգահեռ

13 Անդ, էջ 199:

14 Անդ, էջ 205:

15 Կենն անդ, էջ 213:

16 սեն անդ, էջ 344-422:

է ընթանում, թեև կան որոշ փառքերություններ, և Ոսկանի՝ ծավալային նկարառամներով կարարած կրճարումներ:

Վախճանյալին մահիճը դնելով «Դասքաշարօնէիցն **սկումբին** շուրջ զվախճանելովն» (Ամսր., էջ 147): Կ. Պոլսի հրապարակությունում նույնը այսպես է ասվում. «Եւ դասքաշարօնէիցն **սյար առնալ** զվախճանելովն»: Ինչպես րեսնում ենք, «պար առնալ»-ի փոխարեն Ոսկանի մօր գրված է **սկումբին**:

Ինչպես րեսնալ Ուրնվայի գուգադիր բերված հարվածից, այնպեղ ևս չկար «պար առնալ» կապակցությունը: Ոսկանը, ըստ երևույթին մրածել է, որ այն ծեսին ներկա եղողների կողմից կարող է բառացիորեն ընկալվել որպես պար, ուստի և այս կապակցությունը Մաշտոցում որպեղ որ հանդիպում է, փոխում է մեկ այլ կապակցությամբ: Բնագրային և իմաստային առումով հեղաքրքիր են և գերեզմանին րրված անվանումները երկու Մաշտոցներում:

Ամսրերղամ

Կ. Պոլիս

էջ 145. ...գիտություն վիրապին վեց թիգ:

էջ 349. ...գիտություն բրածին վեց թիգ:

Նկարքրքիր փառքերություն, ավելի ճիշտ՝ բնագրային սղում է նաև հերևյալը.

Ամսրերղամ

Կ. Պոլիս

էջ 168. ...Եւ բառնան քահանայքն և րերեն ի դուրս սրահի եկեղեցույն: Եւ այս կանոն կարարի

էջ 362. Եւ բառնան քահանայքն և րերեն ի դուրս սրահի եկեղեցույն: Իսկ եթէ սրահ ոչ իցէ, այսինքն ժամարուն, աճցեն յանդիման դրան եկեղեցույն:

Այս կրճարումը ցույց է րալիս, որ Ոսկանը իր «Մաշտոցը» հրապարակելիս նկարի է ունեցել այնպիսի մի միջավայր, ուր ծիսական նման մանրամասների կարարման համար համապարասխան րեղային պայմաններ չեն եղել: Այս հանգամանքը ևս վկայում է, որ «Մաշտոցի»՝ Ամսրերղամի այս հրապարակությունը ավելի շար ուղղված է եղել գաղթաշխարհի և քաղաքային միջավայրի հայությանը:

Ավաճի օգրին է իոսում նաև քահանայաթաղի կանոնի սույն հրապարակության մեջ բացակայող հերևյալ դրվագը, որը սակայն, կա Կ. Պոլսի հրապարակությունում. «Եւ թէ ննջեցեալն կաթողիկոս իցէ, գայս աղօթս ևս հանդերձ կցորդին կարդա»¹⁷: Այսպիսով կարելի է մրածել, որ Ոսկանը ենթադրել է, թե այն միջավայրում, ուր րարածվելու էր իր հրապարակած Մաշտոցը, դժվար թե վախճանման պահին Կաթողիկոս գրնվի, և ծիսական այս հրահանգը չի գերել: Փոխարենը սակայն, դրել է եպիսկոպոսի վախճանմանը վերաբերող հրահանգը, քանի որ եպիսկոպոսները թեմակալ առաջնորդի հանգամանքով սպասավորել են նաև հայկական գաղթավայրերում: Ահա այս պարճառով դրել է հիշյալ հրահանգը, ուր ասվում է. «Եւ եթէ յեպիսկոպոսաց իցէ գաթոն և գգաւագանն յեկեղեցուջն դնեն, մինչև այդ յաջորդի» (էջ 194): Այս հարվածը բառացի նույնությամբ կա և Կ. Պոլսի

¹⁷ Անդ, էջ 369:

Մաշպոցում¹⁸: Ոսկանը այն կարևոր է համարել գեպեղելու, քանի որ ուղղակիորեն վերաբերում է ևս հենց հեռավոր թեմերին, ուր բավական երկար ժամանակ էր անցնում մինչև որ առաջնորդի վախճանման լուրը կաթողիկոսարան էր հասնում, նոր առաջնորդ էր նշանակվում ևս իրեն հանձնված վիճակը հասնում:

Քահանայաթաղի յոթ օրերի կանոնաշարից բացի, Կ. Պոլսի հրապարակությունը ունի նաև 15-րդ օրվա, ապա և քառասունքի և փարոս, որն անվանվում է «Տարեկցին» կանոնները¹⁹: Ոսկանի Մաշպոցը սակայն, թե՛ Աշխարհակալաթաղի ևս թե՛ այս դեպքում՝ Քահանայաթաղի, չունի այս կանոնը:

Թե որքան դժվար է եղել ԺԷ դարում «Մաշպոց» ծխարանի, ու առավել ևս Քահանայաթաղի կանոնի հրապարակությունը և որքան կարևոր, երևում է այս հրապարակությունից ավելի քան մեկ դար անց Ս. Էջմիածնի՝ իր իսկ կողմից հիմնած նորաբաց փայարանում Սիմեոն Ա Երևանցու 1777 թ. հրապարակած «Կարգ թաղման կարգաւորաց» գրքի վերջում երջանկահիշարակ Նայրապետի գեպեղած հիշարակարանից, որում, իր նպատակն է եղել կազմել Մեծ Մաշպոցի ճշգրիտ բնագիրը, քանի որ այս հարցով զբաղվողները գիտեն, թե ինչքան ու ինչպիսի սխալներ ևս աղճատումներ էին ներմուծվել ձեռագիր և փայագիր Մաշպոցները: Ահա այս պարճառով հավաքելով Մաշպոց ծխարանի ձեռագիր օրինակները, ուղղվելիք փոփոխությունները ուղղում է, իսկ հետագայում ներմուծվածները կրճատում ևս հանում: Նաև լրացնում է թերի, այսինքն այն միավորները, որոնք ժամանակի ընթացքում հանվել էին իրենց փոփոխությունների ևս թե փայագրողների մեղքով: Սիմեոն Երևանցին, ինչպես ինքն է ասում, ուղղել է նաև իմաստային խաթարումները: Այնուհետև անդրադառնում է այն հարցին, թե ինչու Մեծ Մաշպոցից միայն Քահանայաթաղի կանոնն է ընկրել փայագրելու համար: Ասում է՝ այս կանոնն ավելի էր աղճատվել, քան մնացյալները: Քահանայաթաղի կանոնը հրապարակելու պարճառներից մեկն էլ այն էր, որ վերջինս ավելի քիչ հանդիպող կանոն էր, որի բնագիրը պարտադրել է առաջնորդվելով վերը հիշված սկզբունքներով²⁰:

Այսպիսով, եթե Ոսկանից մեկ դար անց Սիմեոն Երևանցին հայրապետական իր իշխանությամբ դժվարանում էր «Մաշպոցի» բնագրերի խմբագրության հարցում, ևս այն էլ այն դեպքում, երբ իր փորձադրության ներքո ուներ Ս. Էջմիածնի հոգևավոր ձեռագրարան արդեն ձևավորվող հավաքածուն, ապա ինչ պետք է աներ հայրենիքից հեռու Ոսկանը դրանից մեկ դար առաջ:

Տպագիր Մաշպոցների, այդ թվում և Սիմեոն Երևանցու աշխատանքի վրա խառնված Կ. Պոլսի 1807թ. և Ս. Էջմիածնի ԺԹ դարի երկու հրապարակությունների համեմատությունը Ոսկանի Մաշպոցի հետ վեր է հանում մի շարք ընդհանրություններ, ցույց տալով, որ Ոսկանը հավաքարիմ է մնացել հայ ձեռագրային ավանդույթին ևս այն փոխանցել գնալով ծավալվող հայկական փայագրությանը:

Տպագիր Մաշպոցների համեմատությունը միաժամանակ ցույց է տալիս, որ Ոսկան Երևանցին ևս առաջնորդվել է Մաշպոց ծխարանի կանոնների բնագրերի պարտադրության նույն այն սկզբունքով, որով Մայր Մաշպոցի կազմման բնագրի պարտադրությանն է

18 Անդ, էջ 375:

19 փեն անդ, էջ 421:

20 «Կարգ թաղման կարգաւորաց», Ս. Էջմիածին, 1777, էջ 509:

ձեռնամուխ եղել այնուհետև Սիմեոն Երևանցին, նպատակ ունենալով ճշտել բնագիրը, այն մաքրելով իմաստային խաթարումներից, միավորների երևառաջությունից, հետագա շրջանի նորամուտ հավելումներից, ինչպես և վերականգնելով ժամանակի ընթացքում դուրս մնացած մասերը:

Քահանայաթաղի այս կանոնին հաջորդում է Ապաշխարության կանոնը՝ «Կանոն կոչումն յապաշխարութեան» (Էջ 268): Կ. Պոլսի հրապարակության մեջ այս կանոնն անվանվում է «Կանոն գմեղուցեալսն յապաշխարութիւն կոչելոյ» (Էջ 218):

«Մաշտոց» ծիսարանի ամենապարզաված կանոններից է «Կանոն ժամահար օրհներոյ» անվանվող կանոնը: Այն այսպես է կոչվում Ամսարեղամի և Կ. Պոլսի հրապարակություններում, իսկ Վաղարշապատի Մաշտոցում «Կանոն ժամահար (Ջանգակ, Կոչնակ) Քշոց, Բուրվառ եւլն, օրհներոյ»²¹:

Կ. Պոլսի հրապարակության կանոնի սկզբում ասվում է. «Բերեն յեկեղեցին և լուսնան նախ ջրով, և ապա գինեաւ և ջնջեն սուրբ ջնջոցով» (Էջ 217): Ս. Էջմիածնի հրապարակությունում

«Բերեն յեկեղեցին՝ առաջի բեմին, լուսնան նախ ջրով և ապա գինեաւ և ջնջեսցեն մաքուր կրաւով»²²: Ոսկանի մոտ այս կանոնի սկիզբը համադրումն է Էջմիածնի «Մաշտոցի» վերնագրի և Կ. Պոլսի հրապարակության սկզբի «Կանոն ժամահար օրհներոյ» այսինքն զանգակ և կոչնակ: Տանին յեկեղեցին առաջի բեմին: Եւ լուսնան նախ ջրով և ապա գինով և մաքրեն ջնջոցաւն» (Էջ 286): Այսպիսով Ոսկանը նախ որպէս ժամահարի բացառություն թվարում է վերջինիս մաս կազմող եկեղեցական առարկաները, հետո նոր նկարագրում սկսվող ծիսական արարողությունը: Նոր գրական լեզվի զարգացմամբ ջնջոց բառն աստիճանաբար սրացավ ոչ դրական իմաստ, ուստի եթե Ոսկանի և Կ. Պոլսի հրապարակություններում ասվում է, թե գինով ու ջրով լվացված առարկաները այնուհետև սրբվում են ջնջոցով, ապա ԺԹ դարի 2-րդ կեսին հրապարակված Մաշտոցում արդեն օգտագործվում է «մաքուր կրաւ» կապակցությունը:

Քահանայական Մաշտոցների պարզաված կանոններից է ժողովրդական կյանքի և արգասաբերության հետ կապվող Խաչավայի կանոնը: Կապված լինելով ժողովրդական կյանքի և հավաքալիքների հետ, քաղեր Մաշտոցներում այն քաղեր անվանումներ և մեկնաբանություններ ունի.

Ամսարեղամի «Մաշտոց»՝ «Կանոն խաչավայ առնելոյ. Ամենայն ցեղ ցառոց բուսոց, քնկոց և պղողոց» (Էջ 288):

Կ. Պոլսի Մաշտոց՝ «Կանոն խաչի գջուր օրհներոյ (որ ասի Խաչավայ) ի բժշկութիւն ախտացելոց, ի ծնողկանութիւն հօրից և ի պղղաբերութիւն բուսոց և քնկոց»:

Ս. Էջմիածնի 1894թ. «Մաշտոց»՝ «Կանոն խաչավայ առնելոյ, որ կոչի խաչահանգիստ ի բժշկութիւն ամենայն ցառոց մարդկան և հօրից, բուսոց և քնկոց» (Էջ 301):

Խաղողի օրհնությունը վերը հիշված մի շարք արարողությունների նման Ոսկանը վերցրել է «Ճաշոցից» և դարձրել առանձին կանոն: Խաղողի օրհնությունը, ինչպես հայտնի է, կատարվում է Տիրամոր Վերափոխման փոռին: Նայաստանի մի շարք շրջաններում

21 «Մաշտոց», Ս. Էջմիածին, 1898, էջ 399:

22 Անդ, էջ 399:

սակայն, կապված բերքի հասունացման և եղանակային պայմանների հետ, այն կարարվում է աշնան սկզբին՝ Սուրբ Խաչի փոխին: Նկարի ունենալով այս հանգամանքը և ցանկանալով նշել, որ օրհնությունը կարարվում է այս փոխին մարտիկոյ Ս. Պարարագից հետո, խաղողի օրհնության սկսվածքում գրում է. «Կանոն խաղող օրհնելոյ ի փօնի Վերափոխման Սրբուհոյ Աստուածածնին և Սրբոյ Խաչին զկնի արձակման պարարագին» (էջ 312): Այնուհետև թվարկվում են օրհնության ժամանակ ասվող ընթերցվածները, որից հետո որոշ համառոտությամբ բերված է Ս. Ներսես Շնորհալու Խաղողի օրհնության աղոթքը, որով և ավարտվում է այս Մաշտոցը, չունենալով որևէ հիշարակարան:

Նայ ձեռագրային ավանդույթով Մաշտոցի փառքեր կանոններին կից կամ որպես արարողության մաս դրվում էին ծիսական բնույթի գանձեր և փաղեր: Ասվածը վերաբերում է հարկապես մարդկային ամենօրյա կյանքի հետ հարաբերվող և քահանայական Մաշտոցների ամենահաճախակի կիրառվող երեք՝ Մկրտության, Պսակի և Թաղման կանոններին, որոնց նվիրված մի շարք գանձեր կան, որոնք հայրնի են ծիսական գանձեր անվամբ: Այս գանձերի կարևոր յուրահատկություններից մեկն այն է, որ նրանք ավելի շար հանդիպում են Մաշտոցներում, քան «Գանձարան» ժողովածուներում:

Մաշտոցներում այս գանձերն ու փաղերը, ինչպես ասացինք, հանդիպում են կանոնի արարողության ընթացքի համապարասխան մասում, կամ քվյալ կանոնի վերջում և կամ էլ, որ ավելի փարածված է, Մաշտոցի վերջում: Տարբեր Մաշտոցների վերջում զետեղված գանձերը ծնունդ են քվել մի նոր ժողովածուի, որն ընդունված է անվանել Մաշտոց-Գանձարան:

Միաժամանակ, Մաշտոցների վերջում, ծիսական նույն նպարակով առանձին բաժնով բերվում են ավերարանների՝ Նարությանը վերաբերող հարվածները, ինչպես նաև ննջեցյալների շարականները:

Այս ավանդույթը փոխանցվել է նաև քպագիր Մաշտոցներին, որոնց վերջում ևս, որպես Մաշտոցին կից ծիսական միավորներ բերվել են հիշյալ ավերարանական հարվածները, գանձերը և փաղերը: Այսպես, 1704 թ. Կ. Պոլսում հրարարակված Մաշտոցում Քահանայաթաղի կանոնից առաջ բերվում է «Շարական ննջեցեղոց» ծավալուն բաժինը²³: Այս Մաշտոցի երկրորդ հրարարակությունում ևս բերված են բժշկության ավերարանական հարվածները և Ննջեցեղոց շարականները²⁴: 1726 թ. նույն քպարանում հրարարակված հաջորդ բաժնում Ննջեցյալների համար ասվող միավորների բաժինը ավելի է մեծացվել և ընդգրկում է հետևյալ բաժինները. «Անրիծք ննջեցեղոց», «Շարականը հանգստեան», ի հավելումն նախորդ երկու հրարարակությունների բերվում է և Առաքել Սյունեցու «Գանձ համօրէն ննջեցեղոց» գանձը և այս շարքը եզրափակվում է Բժշկության Ավերարաններով²⁵: 1785 թ. դարձյալ Կ. Պոլսում հրարարակված «Մաշտոցում» մեծ քնդ է քրված Թաղման կարգի հետ հարաբերվող գանձերին, փաղերին և ողբերին²⁶:

Այս ավանդույթը պահելով իր կենսունակությունը՝ շարունակվում ևս հասնում է մինչև

23 «Մաշտոց», Կ. Պոլիս, 1704, էջ 272-347:

24 «Մաշտոց», Կ. Պոլիս, 1714, էջ ԲԾԾԳ-ԳԾԽ:

25 «Մաշտոց», Կ. Պոլիս, 1726, էջ ՄԼԱ-ՅՆԵ:

26 «Մաշտոց», Կ. Պոլիս, 1785, էջ 302-351:

նոր շրջանի Մաշտոցները, ուր պարտադիր գերեզման էն Բժշկության և հանգստյան ավերարանները, ինչպես նաև Ննջեցեյոց շարականները:

Ոսկան Երևանցու մյուս հրապարակությունների նման, այս «Մաշտոցը» ևս դիմացավ ժամանակի քննությանը, որի լավագույն հավաստումն է Նակոր Դ Ջուղայեցու կողմից Սահակ Լալիսկոսի՝ Ոսկանին ուղղված 1673 թ. թվակիր նամակը: Այս նամակում Սահակ Սրբազանը Նայոց Նայրապետի կողմից իր գնահատանքը հայտնելով ծանր գոհությունների գնով իրականացրած քաղաքականությունների համար, միաժամանակ ձեռագիր մի «Մաշտոց» է ուղարկում Վեհափառի կողմից, որ Ոսկանը այն հրապարակի²⁷:

Ոսկան Երևանցու հանդեպ Մայր Աթոռի բացառիկ վստահությունը հավաստվում է այն հանգամանքով, որ Սահակ Սրբազանը Նակոր Կաթողիկոսի կողմից ասում է, թե Վեհափառը նրան իրավունք է վերապահել, որ իր հայեցողությամբ համապատասխան կրճատումներ և խմբագրումներ կատարի այդ «Մաշտոցի» կանոններում:

Ահա այսպես, Նայոց եկեղեցու ծիսական գլխավոր գիրքը՝ Մեծ Մաշտոցը Նակոր Ջուղայեցի Կաթողիկոսը վստահում է իրականացնել հայկական քաղաքական այդ բացառիկորեն մեծ և անձնագույն նվիրյալ մշակին: Ոսկան վարդապետը վստահաբար կիրականացներ և այս հրապարակությունը Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի անունը կրող քաղաքում, համահունչ և արժանի ազգային-եկեղեցական մեր ավանդներին, եթե վերահաս մահը, մինչ այս նամակի քննությանը, հաջորդ քարտում՝ 1674 թ. չկտրեր նրա արդյունաշար, բայց և պառապալից կյանքի թելը:

27 Կարապետ Լալի. Ամստոնի, Ոսկան վրդ. Երևանցի և իր ժամանակը, Ս. Ղազար, 1975, էջ 335-337: